ՉՈՐՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1992 թվականի մայիսի 15-ի՝ «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին

Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության (այսուհետ՝ ՀԱՊԿ) անդամ պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով 2000 թվականի հունիսի 20-ին ստորագրված՝ 1992 թվականի մայիսի 15-ի՝ «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» համաձայնագրի իրագործման մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությամբ,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերությունով.

«Ռազմական նշանակության արտադրանքի գները ձևավորվում են ռազմական նշանակության արտադրանք մատակարարող (ծառայություններ մատուցող, աշխատանքներ կատարող) Կողմի՝ սեփական կարիքների համար ազգային զինված ուժերի, այլ զորքերի, զինվորական կազմավորումների, իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների պատվերների կատարման ժամանակ ռազմական նշանակության արտադրանքի համար գնագոյացումը կարգավորող օրենսդրությանը համապատասխան:

Այն դեպքում, երբ ռազմական նշանակության արտադրանքը չի գնվել ռազմական նշանակության արտադրանք մատակարարվող Կողմի ազգային զինված ուժերի, այլ զորքերի, զինվորական կազմավորումների, իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների սեփական կարիքների համար, արտոնյալ պայմաններով մատակարարման ժամանակ դրանց նկատմամբ գնագոյացումը ձևավորվում է արտադրող ձեռնարկությունների կողմից ազգային զինված ուժերի շահերից ելնելով, ռազմական նշանակության արտադրանքի պատվերների կատարման ժամանակ ռազմական նշանակության արտադրանք մատակարարող Կողմի օրենսդրությանը համապատասխան:

Արտոնյալ պայմաններով ռազմական նշանակության արտադրանք

մատակարարող Կողմը, անհրաժեշտության դեպքում, ռազմական նշանակության արտադրանքի ձեռքբերմամբ շահագրգիռ Կողմի հարցմամբ, տրամադրում է Համաձայնագրի դրույթներով ռազմական նշանակության արտադրանքի մատակարարման համար պայմանագրի (պայմանագրի նախագծի) պայմանների համապատասխանության մասին, այդ թվում՝ գների կազմավորման մասով, լիազորված մարմնի գրավոր հաստատումը»:

Հոդված 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի 14-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Կատարված է Մինսկ քաղաքում 2017 թվականի նոյեմբերի 30-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերենով:

Բնօրինակը պահվում է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության քարտուղարությունում, որը սույն Արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից
/ստորագրություն/

Ղրղզստանի Հանրապետության կողմից
/ստորագրություն/

Բելառուսի Հանրապետության կողմից
/ստորագրություն/

Ռուսաստանի Դաշնության կողմից
/ստորագրություն/

Ղազախստանի Հանրապետության կողմից
/ստորագրություն/

Տաջիկստանի Հանրապետության կողմից
/ստորագրություն/

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2017թ. նոյեմբերի 30-ին ստորագրված «1992թ. մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին համաձայնագրում» փոփոխություններ կատարելու մասին» չորրորդ արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն